ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/41

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի իրավահաջորդ «Արմ Լյուքս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ՝ Գ. Կարապետյանի և Ի. Եղիազարյանի
«Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Քոյլոյանի և Հ. Ղազարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով գնանշման հարցում, մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1316-2020 գրությամբ «Էլիտա Էսվե»

ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 01.02.2020թ.-ի թիվ 01/61-1549 գրության հիման վրա, 04.02.2020թ.-ին «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/41 համարի ծածկագիրը և 19.02.2020թ.-ին և 28.02.2020թ նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 28.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.03.2020թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 01.02.2020թ. թիվ 01/61-1549 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի՝ իրավահաջորդ «Արմ Լյուքս» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) միջև 01.11.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝

«Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Ծառայությունը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով», որի վերջնաժամկետը լրացել է 15.12.2019 թվականին և Ընկերությունը հավուր պատշաճի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, որի դիմաց վճարվել է պայմանագրային գումարի հիսուն տոկոսը՝ 5235000 (հինգ միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոուեյյծի 1-հն մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ

կնքված ծառայությունների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում եմ «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացվել է թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 12.02.2020թ.-ին գրությամբ դիմել է «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1316-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ ներկայանալով նաև հրավիրված նիստերին:

Ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

««ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊ ընկերության իրավահաջորդ է հանդիսանում «ԱՐՄ ԼՅՈՒՔՍ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

Հայտնեմ նաև, որ, մինչ Պատվիրատուի կողմից Ընկերությանը գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պահանջ ներկայացնելը, որի հիմքով հարուցվել է սույն՝ թիվ ՍՅ-ԼՕ-2020/41 ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ), Ընկերությունը 12.02.2020 թվականին ներկայացրել է թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 01.11.2019 թվականին կնքված պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) Պատվիրատուի կողմից միակողմանի

մասնակի լուծելու դեմ բողոք գնումների հետ կապված բողոքներ քննող անձին: Սակայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Լ. Օհանյանի կողմից 14.02.2020 թվականին մերժվել է բողոքի վարույթ ընդունելը, քանզի այն ընդդատյա չի եղել բողոքներ քննող անձի կողմից քննությանը և բողոքը չի ներկայացվել նախքան պայմանագրի կնքումը, ի դեպ բողոքը մնացած մասով ներկայացվել է պատշաճ կարգով: Սույնով հաստատվում է այն փաստը, որ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը մասնակի լուծելու որոշումը ենթակա է վիճարկման միայն դատական կարգով, որը իրենից ենթադրում է առավել երկար ընթացակարգային վարույթ համեմատած Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն, իսկ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացկարգի վարույթը կասեցնելու իրավական հնարավորություն Օրենսդիրը չի սահմանել, ուստի սույն Ընթացակարգի շրջանակում քննության է ենթակա Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու որոշման իրավաչափությունը, քանզի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի շրջանակում այլ կերպ Ընկերությունը զրկվում է իրավական պաշտպանությունից:

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

- ✓ *Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊ ընկերության իրավահաջորդ «ԱՐՄ ԼՅՈՒՔՍ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) միջև թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 01.11.2019 թվականին կնքվել է պայմանագիր: Հիմք՝ կողմերի միջև թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 01.11.2019թ. կնքված Պայմանագիրը:*
- ✓ *Ընկերության կողմից ծառայությունները մատուցվել են պատշաճ Պայմանագրի դրույթներին համապատասխան, Պայմանագրի կատարումից մասնակի հրաժարվել է Պատվիրատուն: Հիմք՝ կողմերի միջև 27.12.2019 թվականին կնքված հանձնման-ընդունման արձանագրությունը և նույն օրը դուրս գրված հարկային հաշիվը:*
- ✓ *Պատվիրատուն 31.01.2020 թվականին ծանուցել է Ընկերությանը Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին: Հիմք՝ Պատվիրատուի կողմից 31.01.2020 թվականի թիվ 01/61-1550 ծանուցումը:*
- ✓ *Պատվիրատուն 31.01.2020 թվականին ծանուցելով Ընկերությանը Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին, որպես հիմք մատնանշել է Ընկերության կողմից իր պարտավորությունները «հավուր պատշաճ» չկատարելը: Սակայն*

մասնակի ընդունելով ծառայությունների մատուցումը, որը պայմանագրում նշված է եղել մեկ չափաբաժնով, չի նշել թե ինչպես է առանձնացրել պարտավորությունների կատարված մասը, ինչպես է առանձնացրել մեկ չափաբաժինը երկու մասի արձանագրելով դրա մասնակի կատարումը և ի վերջո չի արձանագրել, թե՞ որ մասով Ընկերությունը իր պարտավորությունները չի կատարել:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով սահմանվում է նաև, որ պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի

փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:

Կարգի 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: (...):

Կողմերի միջև 01.11.2019 թվականին կնքված պայմանագրի 3.3. կետի համաձայն՝ եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բցասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն

ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Սույն իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ Օրենսդիրը Պայմանագրի միակողմանի լուծման հիմք նախատեսել է միայն այն դեպքում, երբ առկա է պատասխանատու սդորաբաժանման բացասական եզրակացությունը, իսկ եթե մասնակի վերացել է գնման պահանջը կամ առկա չէ մասնակի ֆինանսավորում, ապա համապատասխանաբար պետք է կայացվի համայնքի կամ ֆինանսների նախարարության որոշում, նախապես ունենալով մասնակցի համաձայնությունը, որը կարող է հիմք հանդիսանալ Պայմանագրի փոփոխության համար, իսկ այլ դեպքեր գործող օրենսդրությունը չի սահմանել: Իսկ ինչ վերաբերվում է Պայմանագրի միակողմանի լուծմանը, ապա կնքված Պայմանագրի համաձայն, եթե պարտավորությունները պաշաճ չեն կատարվում, ապա պատասխանատու սդորաբաժանման բացասական եզրակացության հիմքով չի սդորագրվում հանձնման-ընդունման արձանագրությունը, որը նոր միայն հիմքեր է առաջանում Պայմանագիրը միակողմանի լուծելու համար, իդեպ հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Պայմանագրով նախատեսված չէ պարտավորությունների մասնակի հանձնման-ընդունման արձանագրության սդորագրման հիմքեր: Այսինքն Պատվիրատուի կողմից հաձնման-ընդունման ակտը չսդորագրելու դեպքում՝ պատասխանատու սդորաբաժանման բացասական եզրակացության հիմքով, նոր միայն գործ ունենք Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ, որը կարող է առաջացնել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր, հակառակ դեպքում եթե սդորագրվել է հանձնման-ընդունման արձանագրությունը և առկա չէ պատասխանատու սդորաբաժանման բացասական եզրակացությունը, ապա բացառվում է պարտավորության խախտումը և այդ հիմքով նաև մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Հետևյալ հանգամանքները համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը՝ Ընկերությունը Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարել է պատշաճ, սակայն Պատվիրատուի մոտ կամ ծառայությունների մի մասի նկատմամբ կարիքը վերանալու կամ ֆինանսավորման մասնակի բացակայության հիմքով, Ընկերությանը առաջարկվել է ծառայությունները մատուցել մասնակի պատասխանատու սդորաբաժանման հետ համաձայնեցված, որից հետո օրենքով նախատեսված ընթացակարգերը կիրականացվեն Պատվիրատուի կողմից:

Սակայն ծառայությունների կատարումը համաձայնեցնելով Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի հետ, 27.12.2019 թվականին կնքվել է Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրություն (որով հիմնավորվում է նաև ծառայությունների մատուցման եղանակն ու պայմանները Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի հետ համաձայնեցված լինելու հանգամանքը), ըստ էության այդ գործողությամբ Ընկերությունը տվել է համաձայնություն Պայմանագիրը մասնակի լուծելու մասին, սակայն համայնքի կամ ֆինանսների նախարարի որոշումը ստանալու և այդ հիմքով Պայմանագիրը փոփոխելու փոխարեն Պատվիրատուն արձանագրեց ենթադրյալ խախտում՝ ծառայությունների ոչ պատշաճ մատուցման հիմքով և ծանուցում ուղարկեց միակողմանի պայմանագիրը լուծելու վերաբերյալ 31.01.2020 թվականին մեկ ամսից ավել ժամկետ անցնելուց հետո, ըստ երևույթին օրենքով սահմանված ընթացակարգերը իր մեղավորությամբ չպահպանելուց հետո, բացի այդ պետք է փաստել, որ առկա չէ պատասխանատու ստորաբաժանման բացասական եզրակացությունը: Իսկ եթե ենթադրենք թե ծառայությունները Ընկերության կողմից մատուցվել են ոչ պատշաճ ապա Պատվիրատուն չի մատնանշել, թե՞ որոնք են ոչ պատշաճ ծառայության մատուցման փաստական հիմքերը, որը պարտավոր էր կատարել, ինչպես նաև անհայտ է թե՞ չափման մեկ միավոր ունեցող ծառայության արժեքից, ինչպես է որոշել, որ պատշաճ են մատուցվել հենց 5235000 ՀՀ դրամի ծառայությունները, իսկ եթե վերցնենք այն փաստը, որ առկա է կողմերի փոխադարձ համաձայնություն 27.12.2019 թվականի հանձնման-ընդունման ակտով, ապա պետք է փաստել նաև, որ ըստ նույն ակտի ծառայությունները համաձայնեցված են եղել պատասխանատու ստորաբաժանման՝ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի հետ, այդ մասով Պայմանագրի կատարման վերաբերյալ առկա է դրական եզրակացություն ուստի ակնհայտ է, որ Պայմանագրի կատարման փուլում կողմերը գործել են փոխադարձ համաձայնությամբ և կարիքը վերացած ծառայությունների կամ ֆինանսական հատկացման մասնակի դադարեցման հիմքով պետք է Պատվիրատուն, ոչ թե միակողմանի լուծեր Պայմանագիրը, այլ իրականացներ գործողություններ Պայմանագրի փոփոխության վերաբերյալ: Հաշվի առնելով նաև այդ հանգամանքը պետք է փաստել, որ Ընկերության կողմից ծառայությունները մատուցվել են պատասխանատու ստորաբաժնման Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի հետ համաձայնեցված, ուստի առկա չէ պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման հիմքեր և դրանով պայմանավորված Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր:

Առաջնորդվելով վերոգրյալով՝ խնդրում եմ մերժել «ԱՐՄ ԼՅՈՒՔՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի պահանջը:»:

4. <u>ՍՑ-ԼՕ-2020/41 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի և «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի միջև 01.11.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Կնքված Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսացել Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ Արաբկիր վարչական շրջանի տարածքի ձևավորումը, որի կատարման ժամկետ է սահմանվել մինչև 15.12.2019թ.-ը: Տեխնիկական բնութագրի համաձայն՝ Մասնակիցը պետք է իրականացնի՝

Կասյան-Բաղրամյան-Կիևյան էստակադայի ամբողջ երկայնքով /240մ/ ամանորյա լույսերի մոնտաժում և ապամոնտաժում՝ կամարի տեսքով, որի համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել 18000մ երկարությամբ լույսեր: Բաղրամյան և Օրբելի եղբայրներ փողոցների հատման մասում տոնի խորհրդին համապատասխան շքեղ լուսային ձևավորում՝ պետք է տեղադրվի /ապամոնտաժումով/ 4մ տրամագծով գունդ՝ տոնածառի խաղալիքի տեսքով, որը ամբողջությամբ պատված լինի լույսերով /մոտավորապես 1700մ լույս/:

Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի նստավայրը, նրան հարակից եղևնիները /թվով 16 հատ/ և Վ.Դավթյանի անվան այգում տեղադրված եղևնին մինչև դեկտեմբերի 15-ը պետք է զարդարել լույսերով և խաղալիքներով: Վ Դավթյանի անվան այգու մոտքային հատվածի գեղարվեստական ձևավորում լուսային կամարով: Զբոսայգու մուտքի աջ և ձախ հատվածներում իրականացնել փողոցային լուսավորության զարդերի տեղադում ՝ ամանորյան թեմաներով: Կոմիտաս 37/1 և 42 հասցեների դիմաց լուսային ձևավորումներով ամանորյա կերպարների տեղադրում:

Վարչական շենքի ճակատային մասը պետք է զարդարվի լուսարձակող ձյունիկներով, մուտքը՝ եղևնու ճյուղերով և գունավոր լուսաշղթաներով: Առաջին հարկում կտեղադրվի եղևնի 2,4 մ ոչ պակաս բարձրությամբ, զարդարված տարբեր չափերի

տոնածառի խաղալիքներով /որակյալ և չջարդվող/, լույսերով և ժապավեններով: Կոմիտասի պողոտայի եկեղեցու բակում ամանորյա եղևնու տեղադրում 6մ բարձրությամբ՝ զարդարված լույսերով և ամանորյա զարդերով: Նաև ձևավորել հարակից բնական եղևնիները:

Կասյան և Կիևյան փողոցներին, ինչպես նաև Ազատության և Կոմիտասի պողոտաներին հարակից ծառերի ամանորյան լուսային ձևավորում՝ աջ և ձախ հատվածների ողջ երկայնքով (օգտագործելով շղթայաձև և LED կամ համարժեք տիպի լույսեր): Կիևյան փողոցի մուտքային երկու շենքերի աշտարակների արտաքին գեղարվեստական լուսավորություն՝ ամանորյան թեմաներով լուսապատկերների ցուցադրությամբ:

Ողջ զարդարանքի դիզայնը և գույների համադրությունը նախապես համաձայնեցնել Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի հետ: Գնի մեջ պետք է ներառված լինի նաև 2020թ. հունվարին նշված ձևավորումների ապամոնտաժումները:

www.gnumner.am համացանցային կայքում 31.01.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի իրավահաջորդ «Արմ Լյուքս» ՍՊԸ-ի միջև 01.11.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների կատարման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Ծառայությունը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով», որի վերջնաժամկետը լրացել է 15.12.2019 թվականին և Մասնակիցը հավուր պատշաճի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, որի դիմաց վճարվել է պայմանագրային գումարի հիսուն տոկոսը՝ 5235000 (հինգ միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակիցը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Մասնակցի հետ կնքված ծառայությունների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պատվիրատուի և Մասնակցի միջև 27.11.2019թ.-ին կնքված հարկային հաշվի համաձայն՝ 01.11.2019թ.-ին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով պայմանագրի հիման վրա «Արմ Լյուքս» ՍՊԸ-ի կողմից դուրս է գրվել 5 235 000 ՀՀ դրամի հարկային հաշիվ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կողմից 04.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1316-2020 գրությամբ «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի իրավահաջորդ՝ «Արմ Լյուքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի

պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 4.1 կետի համաձայն՝ Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 10 470 000 ՀՀ դրամ:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու

համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Երևանի քաղաքապետարանի և «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի միջև 01.11.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսացել Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ Արաբկիր վարչական շրջանի տարածքի ձևավորումը, որի կատարման ժամկետ է սահմանվել մինչև 15.12.2019թ.-ը: Տեխնիկական բնութագրի համաձայն՝ Մասնակիցը պետք է իրականացնի՝

Կասյան-Բաղրամյան-Կիևյան էստակադայի ամբողջ երկայնքով /240մ/ ամանորյա լույսերի մոնտաժում և ապամոնտաժում՝ կամարի տեսքով, որի համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել 18000մ երկարությամբ լույսեր: Բաղրամյան և Օրբելի եղբայրներ փողոցների հատման մասում տոնի խորհրդին համապատասխան շքեղ լուսային ձևավորում՝ պետք է տեղադրվի /ապամոնտաժումով/ 4մ տրամագծով գունդ՝ տոնածառի խաղալիքի տեսքով, որը ամբողջությամբ պատված լինի լույսերով /մոտավորապես 1700մ լույս/:

Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի նստավայրը, նրան հարակից եղևնիները /թվով 16 հատ/ և Վ.Դավթյանի անվան այգում տեղադրված եղևնին մինչև դեկտեմբերի 15-ը պետք է զարդարել լույսերով և խաղալիքներով: Վ Դավթյանի անվան այգու մոտքային հատվածի գեղարվեստական ձևավորում լուսային կամարով:

Զբոսայգու մուտքի աջ և ձախ հատվածներում իրականացնել փողոցային լուսավորության զարդերի տեղադում ՝ ամանորյան թեմաներով: Կոմիտաս 37/1 և 42 հասցեների դիմաց լուսային ձևավորումներով ամանորյա կերպարների տեղադրում:

Վարչական շենքի ճակատային մասը պետք է զարդարվի լուսարձակող ձյունիկներով, մուտքը՝ եղևնու ճյուղերով և գունավոր լուսաշղթաներով: Առաջին հարկում կտեղադրվի եղևնի 2,4 մ ոչ պակաս բարձրությամբ, զարդարված տարբեր չափերի տոնածառի խաղալիքներով /որակյալ և չջարդվող/, լույսերով և ժապավեններով: Կոմիտասի պողոտայի եկեղեցու բակում ամանօրյա եղևնու տեղադրում 6մ բարձրությամբ՝ զարդարված լույսերով և ամանօրյա զարդերով: Նաև ձևավորել հարակից բնական եղևնիները:

Կասյան և Կիևյան փողոցներին, ինչպես նաև Ազատության և Կոմիտասի պողոտաներին հարակից ծառերի ամանորյան լուսային ձևավորում՝ աջ և ձախ հատվածների ողջ երկայնքով (օգտագործելով շղթայաձև և LED կամ համարժեք տիպի լույսեր): Կիևյան փողոցի մուտքային երկու շենքերի աշտարակների արտաքին գեղարվեստական լուսավորություն՝ ամանորյան թեմաներով լուսապատկերների ցուցադրությամբ:

Ողջ զարդարանքի դիզայնը և գույների համադրությունը նախապես համաձայնեցնել Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի հետ: Գնի մեջ պետք է ներառված լինի նաև 2020թ. հունվարին նշված ձևավորումների ապամոնտաժումները:

www.gnumner.am համացանցային կայքում 31.01.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի իրավահաջորդ «Արմ Լյուքս» ՍՊԸ-ի միջև 01.11.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների կատարման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Ծառայությունը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով», որի վերջնաժամկետը լրացել է 15.12.2019 թվականին և Մասնակիցը հավուր պատշաճի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, որի դիմաց վճարվել է

պայմանագրային գումարի հիսուն տոկոսը՝ 5235000 (հինգ միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի 4.1 կետի համաձայն՝ Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 10 470 000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակիցը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվել է Մասնակցի հետ կնքված ծառայությունների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պայմանագրի 4.1 կետի համաձայն՝ Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 10 470 000 ՀՀ դրամ:

Պատվիրատուի և Մասնակցի միջև 27.11.2019թ.-ին կնքված հարկային հաշվի համաձայն՝ 01.11.2019թ.-ին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով պայմանագրի հիման վրա «Արմ Լյուքս» ՍՊԸ-ի կողմից դուրս է գրվել 5 235 000 ՀՀ դրամի հարկային հաշիվ:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, Երևանի քաղաքապետարանի և «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի միջև 01.11.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով գնման պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ Արաբկիր վարչական շրջանի տարածքի ձևավորման ծառայությունները Մասնակցի կողմից մատուցվել են մասնակի, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Վերոնշյալը ապացուցվում է նաև այն փաստական հանգամանքով, որ Պայմանագրով նախատեսված՝ 10 470 000 ՀՀ դրամի գումարի չափով ծառայությունների մատուցման դիմաց 27.11.2019թ.-ին Մասնակցի կողմից դուրս է գրվել ընդամենը 5 235 000 ՀՀ դրամի հարկային հաշիվ, որպիսի պայմաններում հաստատվում է Մասնակցի կողմից պայմանագիրը մասնակի կատարված լինելը փաստը:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից նշված այն հանգամանքին, որ վերջինիս կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվել են պատշաճ, սակայն Պատվիրատուի մոտ ծառայությունների մի մասի նկատմամբ կարիքը վերանալու կամ ֆինանսավորման մասնակի բացակայության հիմքով, Մասնակցին առաջարկվել է ծառայությունները մատուցել մասնակի, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Պատվիրատուն հրաժարվել է Պայմանագրի ամբողջական կատարումից: Ինչ վերաբերում է Պատվիրատուի՝ ծառայությունների մի մասի ֆինանսավորման մասնակի բացակայությանը, ապա այն պետք է կարգավորվեր կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրով, որն էլ կբացառեր Պայմանագրի միակողմանի մասնակի լուծումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ի (իրավահաջորդ՝ «Արմ Լյուքս» ՍՊԸ) կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի մասնակի 31.01.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 31.01.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ն (իրավահաջորդ՝ «Արմ Լյուքս» ՍՊԸ) խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1316-2020 գրությամբ «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ին (իրավահաջորդ՝ «Արմ Լյուքս» ՍՊԸ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/41 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ին (իրավահաջորդ՝ «Արմ Լյուքս» ՍՊԸ) ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ